Անդրադառնալով Հայցվորի ներկայացուցչի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու պահանջին, ապա Դատարանը ցանկանում է նշել հետևյալը.

Անետա Սարգսյան ԱՁ-ի և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի միջև 21.07.2025 թվականին կնքվել է իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ թիվ 2025/07-01 պայմանագիրը, որի գինը կազմել է 800.000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը և պարտադիր այլ վճարները:

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում, ապացույցներ, դիրքորոշում, միջնորդություններ, գործը քննվել է գրավոր ընթացակարգով:

Դատարանն, ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 350.000 ՀՀ դրամ, ուստի պետք է Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել 350.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/231» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 17.07.2025թ. թիվ 4 արձանագրության 1.2-րդ, 1.3-րդ, 1.4-րդ և 2.1-րդ կետերի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/231» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատող հանձնաժողովի 17.07.2025թ. թիվ 4 արձանագրության 1.2-րդ (գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների մասին որոշումը), 1.3-րդ (հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշումը), 1.4-րդ (առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը գնահատելու մասին որոշումը) և 2.1-րդ (գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը) կետերի որոշումները:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի բռնագանձել 395.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի բռնագանձել 350.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE60-E266-41D3-AE95 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am